ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 17/2026/Վ/Վ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 հունիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հունիսի 19-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Սեմյոն Բաբայանի դիմումները (այսուհետ՝ Դիմում 1 և Դիմում 2, միասին՝ դիմումներ)՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտում թույլ տալու վերաբերյալ.

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ դիմումներով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Դիմում 1-ի համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցվել են հայտարարություններ, որոնք Հայաստանի Հանրապետությունը և նրա քաղաքացիներին բնութագրում են որպես կոռուպցիոն շատ բարձր ռիսկեր ունեցող միջավայր և կասկածի տակ են դնում ընտրությունների լեգիտիմությունը: Ըստ Դիմում 1-ի՝ ընդդիմադիր մի շարք կուսակցությունների, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքների և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, մասին

խոսելիս ՀՀ վարչապետը նշել է, որ նրանց ձայն տված քաղաքացիների 70 տոկոսը ստացել է ընտրակաշառք:

1.2 Դիմում 1-ով նշվել է, որ հիմք ընդունելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված պաշտոնական տեղեկությունները՝ նշված կուսակցություններին ընդհանուր առմամբ ձայն է տվել 544,451 ՀՀ քաղաքացի: Ն.Փաշինյանի հաշվարկով՝ այդ քաղաքացիների 70 տոկոսը, այսինքն՝ 381,116 անձ, մեղադրվում է ընտրակաշառակերության (կոռուպցիայի) մեջ: ՀՀ ընտրողների ընդհանուր թիվը, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների, կազմում է 2,503,976: Դիմում 1-ի համաձայն՝ ստացվում է, որ երկրի ղեկավարը ՀՀ յուրաքանչյուր վեցերորդ քաղաքացուն (18 տարեկանից բարձր) հրապարակայնորեն մեղադրում է կոռուպցիոն հանցագործության՝ ընտրակաշառք ստանալու մեջ:

1.3 Դիմում 1-ով վկայակոչվել են ՀՀ Սահմանադրության 3-րդ և 66-րդ հոդվածները և նշվել է, որ պետության բարձրագույն պաշտոնյայի կողմից առանց դատական ակտերի հարյուր հազարավոր քաղաքացիների ընտրակաշառակերպության մեջ մեղադրելը հարվածում է պետության հեղինակությանը, խախտում է քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը և կարող է պարունակել պաշտոնեական դիրքի չարաշահման կամ սուտ մատնության հատկանիշներ, քանի որ որպես պետության ղեկավար՝ նա պարտավոր է տիրապետել փաստերի և իրավական ընթացակարգերի:

1.4 Դիմողը նշել է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի հանրային հայտարարություններում տեղ գտած պնդումներն ուղղակիորեն հարվածում են ՀՀ միջազգային հեղինակությանը, խախտում են բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները և պարունակում են ՀՀ հարյուրհազարավոր քաղաքացիների հասցեին հնչեցված անհիմն մեղադրանքներ, և ներկայացրել է նշված պնդումները քննության առնելու պահանջ:

1.5 Դիմում 1-ի համաձայն՝ երկրի բարձրագույն պաշտոնյան առանց օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կոռուպցիոն ծանր հանցագործության (ընտրակաշառակերության) մեջ է մեղադրում ավելի քան 381,000 քաղաքացու, որը

հանրային ծառայողի վարքագծի կանոնների կոպիտ խախտում է, անմեղության կանխավարկածի և էթիկայի խախտում: Դիմում 1-ով նշվել է, որ աշխարհում կոռուպցիայի մակարդակը չափվում է Transparency International-ի Կոռուպցիայի ընկալման համաթվով (CPI) և այլ հեղինակավոր ինդեքսներով: Ըստ Դիմում 1-ի՝ պետության ղեկավարի կողմից հնչեցված նման նախադեպը չունեցող հայտարարությունը Հայաստանը միջազգային հանրության աչքերում ներկայացնում է որպես համատարած կոռումպացված և բարձր ռիսկային երկիր, ինչը բացասաբար է անդրադառնում ներդրումային միջավայրի և արտաքին վարկանիշների վրա:

1.6 Դիմում 2-ով ներկայացվել են Դիմում 1-ով նկարագրված նույն դեպքը և դրա առթիվ սույն որոշման 1.1-րդ և 1.2-րդ կետերով նկարագրված փաստարկները: Բացի այդ, Դիմում 2-ով նշվել է, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ բարձրաստիճան պաշտոնատար անձինք պարտավոր են պահպանել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքները և որ Ն.Փաշինյանի հայտարարությամբ խախտվել են օրենքի դրույթները: Դիմում 2-ով նշվել է, որ հանրային ծառայողը պարտավոր է դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ, նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և հանրային ծառայության հանդեպ վստահության և հարգանքի ձևավորմանը, իսկ երկրի ղեկավարի կողմից ավելի քան 381,000 քաղաքացու հասցեին առանց դատական ակտի հանցագործության մեղադրանք հնչեցնելը խաթարում է հանրային վստահությունը պետական ինստիտուտների հանդեպ:

1.7 Դիմում 2-ով նաև նշվել է, որ հանրային ծառայողը պարտավոր է ցուցաբերել հարգալից վերաբերմունք բոլոր անձանց հանդեպ, իսկ քաղաքական հայացքների համար քաղաքացիների հսկայական զանգվածին հանցագործ պիտակավորելը հարգալից վերաբերմունքի սկզբունքի ուղղակի խախտում է:

1.8 Դիմումներով ներկայացվել են հետևյալ պահանջները՝

1.8.1 ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի (էթիկայի) սկզբունքների ենթադրյալ խախտման փաստով հարուցել վարույթ,

1.8.2 Տալ պաշտոնական եզրակացություն՝ արդյոք պետության ղեկավարի կողմից սեփական ժողովրդի ⅙-ին կոռուպցիայի մեջ մեղադրող չհիմնավորված հայտարարությունը համատեղելի է բարձրաստիճան պաշտոնյայի էթիկայի չափանիշների հետ:

1.9 Դիմումներով ներկայացվել է «mamul.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի հունիսի 18-ի՝ «Ասում եք՝ ընդդիմությանը ընտրածների 70 տոկոսը ընտրակաշառք է վերցրել. գնալու եք նրանց բանտերը լցնելո՞վ». լրագրողը՝ Նիկոլ Փաշինյանին» վերտառությամբ հրապարակման (այսուհետ՝ Հրապարակում) հղումը[1]:

2. Դիմումների ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական հանգամանքները, կիրառելի օրենսդրական կարգավորումները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները

2.1 Հանրապետության նախագահի՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-200-Ա հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվել է ՀՀ վարչապետ և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2 Դիմումով ներկայացված Հրապարակման ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

2.2.1 Հրապարակման համաձայն՝ ճեպազրույցի ժամանակ լրագրողը Նիկոլ Փաշինյանին ուղղել է հետևյալ հարցը. «Պարոն Փաշինյան, երեկ Ազգային ժողովի ամբիոնից Դուք էսպես շատ, ո՞նց ասեմ, ջղայնացած հայտարարություններ էիք անում, ասում էիք՝ ընտրակաշառք տվողներին, վերցնողներին բանտերն եք լցնելու, հետո ասեցիք՝ 70 տոկոսը ընտրակաշառք է վերցրել ժողովրդի՝ էդ 500 հազարից 70 տոկոսը: Հիմա ուզում եմ հասկանամ՝ գնալու եք 70 տոկոս, ըստ Ձեր պատկերացումների, ընտրակաշառք վերցրածներին բանտերը լցնելո՞վ: Այսինքն, 70… Ըստ Ձեզ, Ձեզանից դժգոհ ժողովուրդ չկա, և միայն ընտրակաշառքո՞վ են Ձեր դեմ քվեարկել, Դուք էլ պատրաստվում եք 500.000-ի 70 տոկոսին ու իրենց, հա, քաղաքական առաջնորդներին բանտերը լցնե՞լ: (…)»:

[1] Հասանելի՝ https://mamul.am/am/news/362969/p2?fbclid=IwdGRjcAShDZdjbGNrBKEMt2V4dG4DY

Ի պատասխան՝ Ն.Փաշինյանը նշել է. *«Ես, առաջին հարցի հետ կապված, ընտրակաշառքով գործեր են, քրեական գործեր են նախատեսված, հարուցված, և ես էլի, ինձ համար շատ վրդովվեցուցիչ փաստ ա, որ, օրինակ, 2021 թվականից հետո ընտրակաշառքով հարուցված գործերով մեղադրյալներից ոչ մեկը էս պահի դրությամբ բանտում չի, սկի բանտ էլ չեն էլ նստել: Ես ասում եմ, որ բոլորը պետք ա մինչև հաջորդ ընտրությունների արդյունքների ամփոփման օրը անցկացնեն բանտում, հակառակ դեպքում նշանակում ա՝ մեր դատաիրավական համակարգը կանաչ լույս ա տալիս ընտրակաշառք բաժանողներին: Չի կարա էդպիսի բան լինի էլ: Եվ մենք նախորդող շրջանին էլ պետք ա անդրադառնանք՝ ինչի՞ ա տենց եղել, պետք ա, ի վերջո… Մենք չենք էլ հետաքրքրվել մինչև էս պահը էդ թեմայով, բայց հիմա դա արդեն քաղաքական հարց ա: Պետք ա հասկանանք՝ ով, ում, ինչի համար, ինչի ա գործը կարճել, ինչ հիմնավորումներով են էդ գործերը կարճվել, ինչի ազատազրկման չեն դատապարտվել:*

Իսկ ինչ վերաբերում ա, իսկ ինչ վերաբերում ա երկրորդ հարցին՝ ի վերջո, նաև, բաներ են եղել, չէ, սոցիոլոգիական հարցումներ են եղել բավականին վստահելի, և, և պետք ա էդ ընտրակաշառքի համակարգը էքստրապոլացնել, և էդտեղից ա իմ եզրակացությունը: Նրանք ովքեր… Իսկ որևէ մեկին բանտ նստացնելու համար պետք ա ապացուցվի մեղքը, ո՞նց կարող ենք մենք ենթադրաբար տեսական ընտրակաշառք տվածին կամ տեսական ընտրակաշառք վերցնողին ենթարկել պատասխանատվության: (…)»:

Լրագրողն արձագանքել է. *«Պարոն Փաշինյան, իմ հիմնական հարցին չպատասխանեցիք»:*

Ն.Փաշինյանը հարցրել է՝ *ո՞րն էր հիմնական հարցը:*

Լրագրողը պատասխանում է. *«Ձեզանից դժգո՞հ չեն, միայն ընտրակաշառքով են (շարունակությունը լսելի չէ):»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Չէ, իհարկե: Դժգոհ են, իհարկե, իհարկե դժգոհ են, բայց ասում եմ, որ 70 տոկոսը քվեարկել ա ընտրակաշառքով: Կարող ա՝ դժգոհը քվեարկել ա նաև ընտրակաշառքով:»:*

2.3 Ազգային ժողովի ութերորդ գումարման տասնմեկերորդ նստաշրջանի՝ 2026 թվականի հունիսի 17-ի հերթական նիստի տեսաձայնագրության[2] ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նիստի շրջանակներում Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանը հնչեցրել է հետևյալ հարցը. *«Հարցս ուղղում եմ կրկին վարչապետին: Մեծարգո վարչապետ, հունիսի 7-ին կայացած հերթական խորհրդարանական ընտրությունները, իմ կարծիքով, բացառիկ էին շատ առումներով՝ սկսած մեր պետության համար դրանց նշանակությունից, ավարտած աննախադեպ մասշտաբի մարտահրավերներով, որոնք ուղղված էին ոչ միայն մեր կառավարության դեմ, այլ նաև առավելապես մեր պետության և մեր ժողովրդի դեմ՝ նպատակ ունենալով թույլ չտալու քաղաքացիների ազատ կամարտահայտմամբ իշխանության ձևավորումը: Եվ էսօր, իհարկե, զավեշտալի ա լսել, թե ինչպես են ընտրակաշառք և ընտրակեղծիք իրենց գենետիկ կոդում ունեցող, իրենց ինքնության մաս կազմող կուսակցությունները ու քաղաքական միավորները, անհատները փրփուրը բերանում ընդհանրապես արտաբերում «ընտրակեղծիք» բառը, բայց ես ուզում եմ, ի հեճուկս էս ամբողջ աղմուկի, խնդրել Ձեզ նաև նախորդ հարցի կոնտեքստում, որին Դուք պատասխանում էիք, ևս մի անգամ ասել, թե ի վերջո, ինչի մասին էին հունիսի 7-ի ընտրությունները և դրանց արդյունքները և եթե համամիտ եք, որ դրանք բացառիկ էին, ապա ինչով էին դրանք բացառիկ: Շնորհակալ եմ:»:*

Պատասխանելով նշված հարցին՝ Ն.Փաշինյանը նշել է. *«Շնորհակալ եմ, տիկին Գրիգորյան, հարցի համար: Էս ընտրությունները հետևյալի մասին էին՝ մենք դժվարություն ունեինք հանրությանը բացատրելու, թե ինչու Ռոբերտ Քոչարյանը բանտում չէ: Մենք դժվարություն ունեինք հանրությանը բացատրելու, թե ինչու Ծառուկյանի թալանվածը վերադարձված չի: Մենք դժվարություն ունեինք ժողովրդին բացատրելու, թե ինչպես ա պատահել, որ կալուգացի օլիգարխը տասնյակ, հեղափոխությունից հետո 8 տարիների ընթացքում շարունակել ա մանկապարտեզներից, դպրոցներից հոսանք գողանալ, ինչպես ա դա հնարավոր եղել: Էս, սրա մասին էր, էս ընտրությունը սրա մասին էր: Եվ ընտրությունը նրա մասին էր,*

[2] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=0p1P5ZFGpo4

որ… Եվ դրա պատճառը, էլի եմ ասում, երեկ մի կտորը ասեցի՝ ինչն էր եղել դրա պատճառը, որովհետև հիմա արդեն ակնհայտ ա, որ էդ մաֆիան ունեցել ա դրսի հովանավորներ, որոնք, որոնց հետ կապված մենք շատ զգույշ և կաշկանդված ենք եղել: Հիմա ես ասում եմ հետևյալը. էս ընտրությունը և ընտրություններում երեխաների ակտիվությունը, ինքը առաջ ա բերել նոր հեղափոխության օրակարգ՝ հեղափոխություն, որտեղ թավիշը պետք ա բացառվի: Որովհետև մենք դժվարություն ենք ունեցել՝ բացատրելու, թե ինչի Ռոբերտ Քոչարյանի և իրա շրջապատի հարսը, փեսեն, աներձագը, բոլորը դատավորներ են Հայաստանի Հանրապետությունում մինչև հիմա: Դժվարություն ենք ունեցել: Որովհետև անընդհատ… Իսկ ինչի՞ են: Որովհետև ամբողջ նախորդող շրջանում սահմանադրական կարգը կառուցվել ա էդ օլիգարխիան պաշտպանելու համար: Որովհետև մենք մտածել ենք, որ այնուամենայնիվ, համակարգեր կան, որոնք… Եվ մենք պետք ա գնանք, էդ համակարգը ջարդելու ճանապարհով, ուրիշ տարբերակ չկա: Չկա ուրիշ տարբերակ: Ես դրա համար եմ ասում՝ սա պարզ ընտրություն չի: Սա հիմա կամ նորից հեղափոխությունը նոր թափ ա ստանում, կամ հակահեղափոխությունը հաղթում ա: Էս ա մեր ընտրությունը: Որովհետև ասում եմ, հլը լավ ա՝ մենք էնքան ինստիտուցիոնալ կարողություն ունենք, որ էդ ընտրակաշառքների մի 10 տոկոսը տեսանելի ենք դարձրել: Բայց շատ կոնկրետ, Հանրապետականի հին ցուցակները, Հանրապետական, ԲՀԿ հին ցուցակները հանել են և ընտրակաշառք են բաժանել և փառք ու պատիվ էն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ովքեր հիմա ձայնագրություններից էլ ա, բազմաթիվ քաղաքացիներ ասել են՝ մենք փող չենք վերցնի և մենք փողով չենք քվեարկի: Էդ մարդիկ Հայաստանի Հանրապետության պետականության սյունն են: Ովքեր չեն վերցրել փող: Ես պաշտոնապես ասում եմ՝ աչքաչափով էլ ա երևում, որ էդ եռագլուխ կուսակցությունների ստացած ձայների 70 տոկոսը փողով ստացած ձայներ են, փողով ստացած ձայներ են: Եվ էս խնդիրը պետք ա լուծվի: Հայաստանի Հանրապետությունը պետք ա ռեակցիա տա: (…)»:

2.4 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

2.5 Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) վարչապետի (...) պաշտոնները, (...) :»:

2.6 Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«4. Պետական վարչական պաշտոններն են (...) մարզպետների (...) պաշտոնները:»:

2.7 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(...)»:

2.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների

պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (…)»:

2.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(…):

2. Հանձնաժողովը (…) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(…)»:

2.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(…)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

3) սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

4) նույն անձի վերաբերյալ նույն հիմքով առկա է Հանձնաժողովի եզրակացություն:

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.11 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշմամբ ընդունվել և 2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել համապատասխան կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք):

2.12 Կանոնագրքի 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.13 Կանոնագրքի 36-րդ կետի համաձայն.

«36. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս՝ ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:»:

2.14 Կանոնագրքի 37-րդ կետի համաձայն.

«37. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող

անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր վարքագծով խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները: Մասնավորապես, Դիմում 2-ով հիշատակվել են բարեկրթության և հարգալիրության սկզբունքները, նշվել է, որ հանրային ծառայողը պարտավոր է դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ, նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և հանրային ծառայության հանդեպ վստահության և հարգանքի ձևավորմանը, իսկ երկրի ղեկավարի կողմից ավելի քան 381,000 քաղաքացու հասցեին առանց դատական ակտի հանցագործության մեղադրանք հնչեցնելը խաթարում է հանրային վստահությունը պետական ինստիտուտների հանդեպ: Դիմում 2-ով նաև նշվել է, որ հանրային ծառայողը պարտավոր է ցուցաբերել հարգալից վերաբերմունք բոլոր անձանց հանդեպ, իսկ քաղաքական հայացքների համար քաղաքացիների հսկայական զանգվածին հանցագործ պիտակավորելը հարգալից վերաբերմունքի սկզբունքի ուղղակի խախտում է:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում դիտարկել Ն.Փաշինյանի վարքագծի համապատասխանությունը Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերին, որոնցով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պարտականությունը՝ ցուցաբերելու բարեկրթություն, հարգալիրություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն, ինչպես նաև հարգելու այլոց պատիվը և արժանապատվությունը:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ դիմումներով վիճարկվում է Ն.Փաշինյանի խոսքի իրավաչափությունը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական*

ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա

զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[3]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո քաղաքական խոսքի սահմանափակման հնարավորությունը հատկապես նեղ է:[4] Ազատ քաղաքական բանավեճի խթանումը ժողովրդավարական հասարակության կարևոր տարրերից է և Եվրոպական դատարանը գտնում է, որ նման բանավեճի շրջանակներում արտահայտման ազատությունը բարձրագույն մակարդակի կարևորություն ունի:[5] Եվրոպական դատարանը նաև փաստել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի իրավաչափ սահմանափակումների շրջանակը նեղ է:[6] Քաղաքական խոսքի լայն սահմանափակումների կիրառումն, անկասկած, անդրադարձ կունենա տվյալ

[3] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[4] Տես, օրինակ, ՆԻՏ Ս.Ռ.Լ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (ՄՊ) (NIT S.R.L. v. the Republic of Moldova [GC]) գործով 2022 թվականի ապրիլի 5-ի վճիռը, դիմում no. 28470/12, § 178

[5] Տես, օրինակ, Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia) գործով 2001 թվականի հուլիսի 12-ի վճիռը, դիմում no. 29032/95, § 83

[6] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 55

պետությունում արտահայտման ազատության նկատմամբ հարգանքի ընդհանուր մակարդակի վրա:[7] Միաժամանակ, քաղաքական բանավեճի ազատությունն իր բնույթով բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների կամ դրա շրջանակներում հնչեցված տեղեկատվության կամ գաղափարների համար կարող են սահմանվել պատասխանատվության միջոցներ:[8] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող (կամ հանրային շահին առնչվող) հարցերով **քաղաքական բանավեճի մասնակցելիս անձինք պետք է չանցնեն այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի որոշակի սահմանները:** Միաժամանակ, նման դեպքերում **թույլատրելի է չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը, այսինքն՝ իր արտահայտություններում անձը կարող է որոշ չափով անզսպություն դրսևորել:**[9]

Եվրոպական դատարանը նաև բազմիցս նշել է, որ ժողովրդի ընտրած ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և նրանց ակտիվ անդամների արտահայտման ազատությունը հատկապես կարևոր է:[10]

Քաղաքական բանավեճի շրջանակներում կատարված վիրավորանքների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը հատկապես կարևորել է այն հանգամանքը՝ արդյոք կատարված վիրավորանքները ունեցել են փաստական հենք: Մի շարք գործերով[11] Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև դիմողի արտահայտությունները վիճահարույց են, սակայն դրանք չեն կարող համարվել անհիմն անձնական հարձակում (gratuitous personal attack), քանի որ դրանց հեղինակը

---

[7] Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 10883/05, § 33

[8] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

[9] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 33

[10] Տես, օրինակ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը, դիմում no. 45581/15, § 147

[11] Տես, օրինակ, Լոպես Գոմես դա Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի (Lopes Gomes da Silva v. Portugal) գործով 2000 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, դիմում no. 37698/97, § 34, Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի (Oberschlick v. Austria (No. 2)) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, դիմում no. 20834/92, §§ 32-33

հիմնվում է օբյեկտիվ բացատրության վրա: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ առանց փաստական հենքի նման արտահայտությունները կարող էին ավելորդ համարվել:[12]

Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 08/2024/Վ/Վ եզրակացությամբ անդրադարձել է քաղաքական բանավեճի շրջանակներում Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի կիրառելիությանն ու մեկնաբանությանը՝ արձանագրելով հետևյալը.

«(...) Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից վերոնշյալ կանոններով սահմանված բարեկրթության, քաղաքավարության, զսպվածության և այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականության խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան այլ լիազորությունների կատարման շրջանակներում դրսևորած վարքագծի դեպքում: Այլ խոսքերով, վարքագիծը, որն այլ լիազորությունների կատարման շրջանակներում կարող է դիտարկվել որպես Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կանոններին ոչ համապատասխան, քաղաքական բանավեճի դեպքում կարող է իրավաչափ դիտվել:

Միաժամանակ, Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել. խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառումը չի կարող Վարքագծի կանոնագրքի՝ վերոնշյալ կարգավորումների համատեքստում իրավաչափ դիտվել, անգամ երբ խոսքը գնում է խորհրդարանում կամ դրա հետ համեմատելի այլ ատյաններում քաղաքական բանավեճի մասին:

(...)»:

[12] Շարսախը և Նյուզ Ֆերլագսգեզելշաֆթն ընդդեմ Ավստրիայի (Scharsach and News Verlagsgesellschaft v. Austria) գործով 2003 թվականի նոյեմբերի 13-ի վճիռ, դիմում no. 39394/98, § 44

Վերոգրյալի համատեքստում քննարկելով Ն.Փաշինյանի խոսքերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն թվականի հունիսի 17-ին, պատասխանելով խորհրդարանական ընտրությունների նշանակության վերաբերյալ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանի հարցին, ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը, ի թիվս այլնի, նշել է, որ պետք է կատարվի ընտրություն՝ կամ հեղափոխությունը նորից թափ պիտի ստանա, կամ հակահեղափոխությունը հաղթի, այնուհետև հայտնել է՝ որ իրենք այնքան ինստիտուցիոնալ կարողություն ունեն, որ ընտրակաշառքների մի 10 տոկոսը տեսանելի են դարձրել՝ դրանով իսկ ակնարկելով, որ գործնականում բաժանված ընտրակաշառքի չափը և ծավալները, իր գնահատմամբ, շատ ավելին են, քան բացահայտվել է իրավապահ մարմինների կողմից: Ն.Փաշինյանը նաև հայտնել է, որ առկա են ձայնագրություններ, որոնցում երևում է, որ կան ՀՀ քաղաքացիներ, որոնք հրաժարվել են ընտրակաշառք ստանալուց, այնուհետև նշել, որ «աչքաչափով էլ ա երևում, որ էդ եռագլուխ կուսակցությունների ստացած ձայների 70 տոկոսը փողով ստացած ձայներ են»:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ դիմումներով ներկայացված տեսանյութում լրագրողը ՀՀ վարչապետին հարց է ուղղում վերոնշյալ խոսքերի մասին՝ հարցնելով, արդյոք Ն.Փաշինյանը պատրաստվում է «բանտերը լցնել» այն 500.000 մարդու 70 տոկոսին, որը, ըստ Ն.Փաշինյանի, ընտրակաշառք է ստացել: Նշված հարցին պատասխանելով՝ Ն.Փաշինյանը նշում է, որ առկա են ընտրակաշառքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներ, արտահայտում է իր դժգոհությունն առ այն, որ 2021 թվականից հետո ընտրակաշառքի հիմքով նախաձեռնված վարույթներով մեղադրյալներից ոչ մեկն այս պահի դրությամբ ազատությունից զրկված չէ: Ն.Փաշինյանը նաև նշում է, որ եղել են վստահելի սոցիոլոգիական հարցումներ, որոնցից պետք է ընտրակաշառքի համակարգն էքստրապոլացնել և հայտնում, որ իր եզրակացությունը (70 տոկոսի հետ կապված) այդտեղից է: Այնուհետև, լրագրողի հարցին առ այն, արդյոք մարդիկ ՀՀ վարչապետից դժգոհ չեն, որ միայն ընտրակաշառքով են քվեարկել, Ն.Փաշինյանն արձագանքել է՝ նշելով, որ դժգոհ են, իհարկե, սակայն 70 տոկոսը քվեարկել է ընտրակաշառքով:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ ըստ Ն.Փաշինյանի ներկայացրած պարզաբանման՝ նա եզրակացրել է, որ ընտրություններին երեք ընդդիմադիր քաղաքական ուժերի (որոնց Ն.Փաշինյանը կոչում է «եռագլուխ կուսակցություններ») օգտին քվեարկած անձանց 70 տոկոսն ընտրակաշառք է ստացել՝ հիմնվելով, իր գնահատմամբ, վստահելի նախընտրական սոցիոլոգիական հարցումների և ընտրությունների արդյունքների միջև տարբերությունների վրա, ինչպես նաև այն հանգամանքի վրա, որ առկա են ընտրակաշառք ստանալու և տալու առթիվ նախաձեռնված քրեական վարույթներ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ Ն.Փաշինյանը նշում է, որ «ընտրակաշառքով գործեր են, քրեական գործեր են նախատեսված, հարուցված», ինչպես նաև, որ «ի վերջո, նաև, բաներ են եղել, չէ, սոցիոլոգիական հարցումներ են եղել բավականին վստահելի և, և պետք ա էդ ընտրակաշառքի համակարգը էքստրապոլացնել, և էդտեղից ա իմ եզրակացությունը»:

Հանձնաժողովն, ըստ այդմ, արձանագրում է, որ Ն.Փաշինյանի կողմից հնչեցված արտահայտություններն ունեցել են փաստական հենք, այսինքն՝ Ն.Փաշինյանի գնահատմամբ, դրանց հիմքում ընկած են եղել որոշակի փաստեր, որոնց հիման վրա նա կատարել է գնահատողական արտահայտություններ՝ նշելով, որ որոշակի քաղաքական ուժերի օգտին քվեարկած անձանց 70 տոկոսն ընտրակաշառք է վերցրել:

Ընդ որում, Հանձնաժողովն ընդգծում է, որ Ազգային ժողովում Ն.Փաշինյանի հնչեցրած խոսքերը կատարվել էին հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի՝ ընտրությունների արդյունքների, նախընտրական շրջանում ենթադրյալ իրավախախտումների, ՀՀ սահմանադրական կարգի, մի շարք նախկին պաշտոնատար անձանց և քաղաքական գործիչների՝ իրավական պատասխանատվության ենթարկվելու և այլ հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովը վերահաստատում է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավեճի շրջանակներում կարծիքի արտահայտման ազատության սահմաններն առավել լայն են, ուստի դրա շրջանակներում քննադատական արտահայտությունները բարեկրթության և հարգալիրության սկզբունքին հակասող կարող են համարվել միայն

խիստ անձնական վիրավորանք պարունակելու, գռեհիկ բնույթ ունենալու, հակառակորդի խոսքերին խիստ ոչ համաչափ վիրավորական բնույթ պարունակելու, անհարկի, չփաստարկված, քննադատական խոսքին լրացուցիչ իմաստային կամ ոճական իմաստ չհաղորդող վիրավորանքներ պարունակող խոսքի պարագայում:

Մինչդեռ, Հանձնաժողովի գնահատմամբ, Ն.Փաշինյանի կատարած պնդումները չեն ունեցել առերևույթ վիրավորելու նպատակ, այլ ուղղված են եղել ընտրությունների ընթացքում իրավախախտումների և ՀՀ քաղաքական դաշտի վերաբերյալ գնահատողական դատողություններ կատարելուն, ընդդիմադիր քաղաքական ուժերի, Ն.Փաշինյանի գնահատմամբ, ոչ իրավաչափ վարքագիծը քննադատելուն: Ավելին, ինչպես արձանագրվեց, Ն.Փաշինյանի եզրահանգումներն ունեցել են փաստական հենք:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ դիմումներով նկարագրված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի հունիսի 19-ին ներկայացված դիմումների հիման վրա վարույթի հարուցումը մերժել:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ